



**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁՐ՝
ԳԻՏԵԼԻՔԻ, ԳՐԻ,
ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԵՎ
ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ**

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ԲՈՒՀ-երի եւ դպրոցների պատասխանատուներին, դասախոսներին եւ մանկավարժներին, ուսանող եւ դպրոցական Մեր զավակներին՝ Գիտելիքի, գրի, դպրության օրվա եւ նոր ուսումնական տարվա առիթով:

Արեւելի եւ մեծ խորհուրդ ունի գիտելիքին ու դպրությանը նվիրված օրը: Մեր ժողովուրդը դարերի մեջ՝ անգամ աղետալի ժամանակներում, արժեւորել է ուսումը, վառ պահել իմացության սերը եւ իր կրթօջախների լույսը: Արդարեւ, ուսյալ եւ կիրք հասարակությունն է ընդունակ բարեփոխելու կյանքը, բարվոք վճիռներ գտնելու իր առջեւ կանգնած խնդիրներին եւ իրականություն դարձնելու առաջընթացի իր տեսիլքները:

Մաղթում ենք, որ այսօր մեր ուսումնական հաստատությունները հայրենիքում եւ սփյուռքում օրեցօր զորանան եւ առավել արդյունավորեն իրենց առաքելությունը՝ կրթելով մեր զավակներին համակողմանի իմացությամբ, հավատավոր ու հայրենասեր հոգով, որպեսզի կարող լինեն նորարարությունների, ստեղծագործական սլացքների եւ շարունակեն քրիստոնյա մեր ժողովրդի ներկայությունը աշխարհում, որ թեպետ փոքրաթիվ, բայց իր ստեղծածով միշտ համեմատվել է մեծերի հետ:

Մեր գնահատանքն ենք բերում կրթության գործի պատասխանատուներին, դասախոսներին ու մանկավարժներին՝ բարեջան ու նախանձախնդիր գործունեության համար: Հայրական հորդոր ենք բերում Մեր զավակներին, որ սիրեն ուսումը, լինեն ուշիմ ու ջանադիր, չթերանան իրենց պարտականություններում, որ ամուր հիմքերով սկզբնավորվի իրենց կյանքի ուղին, որն ապագան է մեր հայրենիքի ու ժողովրդի:

Աղոթք ենք բարձրացնում, որ Աստված օրհնի ջանքերը կրթության նվիրյալների եւ քաջարթուն միտք ու հոգի շնորհի մեր զավակներին: Օրհնյալ ուսումնական տարի, առատ արդյունքներ ու բարի վատապ: Ամեն:

Օրհնությամբ՝
**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց**

2 սեպտեմբերի

Փասաղինայի խաղափառներին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Փասաղինայի (ԱՄՆ) քաղաքացիական պրիմատի Թերի Թորնթեյի գլխավորած պատվիրակությանը:

Փասաղինայի միջեւ 25 տարի առաջ ձեւավորված սերտ կապերը եւ այսուհետ եւս արդյունավետ գործակցություն ցանկացավ քույր քաղաքներին:

Փասաղինայի քաղաքացիները եւս ուրախություն հայտնեց հանդիպման առիթով, ա-

պա խոսեց քաղաքի կյանքում հայ համայնքի կարեւոր ներկայության եւ ներդրման մասին: Կարեւորելով Եկեղեցու առաքելությունը համայնքային կյանքում՝ տիար Թորնթեյն տեղեկացրեց Վեհափառ Հայրապետին նաեւ քաղաքացիության եւ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի միջեւ ձեւավորված կապերի վերաբերյալ:

Չրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց պատմական ժառանգության պահպանության ուղղությամբ ձեռնարկվող քայլերին, ինչպես նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ կրթական եւ սոցիալական ուղիներում ծավալված գործունեությանը: Խոսվեց տարածաշրջանում տիրող իրավիճակի եւ Հայ Եկեղեցու խաղաղարար առաքելության մասին:

Հանդիպման ավարտին քաղաքացիական պրիմատի Թերի Թորնթեյն Արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանի ուղեկցությամբ այցելեց Մայր տաճար, ծանոթացավ ավանդատուն-թանգարանում պահվող հոգեւոր եւ մշակութային արժեքներին:

6 սեպտեմբերի

Ղոթի Ուղղափառ Եկեղեցու ուխտավորներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ղոթի ուխտավորների՝ գլխավորությամբ Ղաթի Ուղղափառ Եկեղեցու Ամերիկայի Միացյալ Նահանգների հարավային շրջանի թեմի առաջնորդ Յուսեֆ Եպիսկոպոսի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ուրախությունը հայտնեց քույր Եկեղեցու հետնորդների՝ Հայաստան կատարած ուխտագնացության առիթով՝ ընդգծելով, որ այն հնարավորություն կընձեռնի նրանց հաղորդակցվելու Հայոց Եկեղեցու հոգեւոր ու մշակութային հարուստ ժառանգությանը:

Նորին Սրբությունն անդրադարձավ Հայաստանյայց Առաքելական եւ Ղաթի Ուղղափառ Եկեղեցիների միջեւ առկա ջերմ եւ բարեկամական հարաբերություններին՝ այս կապակցությամբ ջերմությամբ վերհիշելով իր այցը Եգիպտոս եւ Ղաթի Եկեղեցու Հովվապետների այցերը Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Վեհափառ Հայրապետը նաեւ խոսեց Ղաթի ժողովրդի զորեղ հավատքի եւ Զրիստոսի հանդեպ ունեցած սիրո մասին՝ անդրադառնալով այսօր Եգիպտոսում նրա առջեւ ծառացած դժվարություններին եւ մարտահրավերներին, երբ շարունակում են հավատքի համար նահատակվել հավատակից ժողովրդի բարեպաշտ զավակներ: Այս առիթով Ամենայն Հայոց Հայրապետը Հայոց Եկեղեցու գորակցությունը հայտնեց քույր Եկեղեցու Հովվապետին, հոգեւոր դասին եւ հավատացելոց՝ Նշելով, որ նրանք մշտապես իր աղոթքներում են:

Իր հերթին Յուսեֆ Եպիսկոպոսը խորին շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ ջերմ ընդունելության եւ հայրապետական օրհնության արժանացնելու համար՝ ընդգծելով, որ ուխտավորներին առաջին անգամ են այցելում Հայաստան՝ այն օրինալ երկիրը, ուր ապրել եւ քարոզել է ս. Գրիգոր Լուսավորիչը, ով նաեւ Ղաթի Եկեղեցու կողմից է հիշատակվում: Սրբազանն Ամենայն Հայոց Հայրապետին փոխանցեց Ղաթի Ուղղափառ Եկեղեցու

պետ, Ալեքսանդրիայի Պապ եւ Համայն Աֆրիկայի Պատրիարք Նորին Սրբությունն Թավադրոս Բ-ի եղբայրական ջերմ ողջույններն ու բարեմաղթանքները, տեղեկացրեց ԱՄՆ-ում քույր Եկեղեցիների թեմերի միջեւ ձեւավորված սերտ կապերի եւ գործակցության մասին:

Հանդիպման վերջում Նորին Սրբությունը հայցեց ամենակալ Աստծու առատ օրհնություններն ու ողորմությունը Ղաթի Եկեղեցու եւ նրա հավատացյալների համար, որ ապրեն խաղաղ կանքով, եւ Աստծո ամենագոր Աջը մշտապես հովանի ու պահապան լինի նրանց:

11 սեպտեմբերի

Իրաֆի հոգեւոր առաջնորդներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրաքի քրիստոնեական ավանդապահությանը նախարար տիար Ռաադ Զաչաչիին եւ Իրաքի Զրիստոնեական Եկեղեցիների առաջնորդներին՝ ուղեկցությամբ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Ավագ արք. Ասատուրյանի:

Ավագ սրբազանը Նորին Սրբությանը ներկայացրեց պատկառելի պատվիրակության անդամներին՝ ուրախություն հայտնելով նրանց՝ Հայաստան այցի կապակցությամբ եւ ներկայացնելով նրանց տպավորությունները հոգեւոր կյանքում վերջին շրջանում արձանագրված ձեռքբերումների վերաբերյալ:

Շարունակությունը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրաֆի հոգեւոր առաջնորդներին

Սկիզբը՝ էջ 1

Այնուհետև ներկաներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Գարեգին Բ Հայոց Յովվապետը՝ ընդգծելով, որ Մեր-ծավոր Արեւելքի երկրներն ու ժողովուրդները մշտապես իր աղոթքների մեջ են։ Նորին Սրբությունը տեղեկացրեց, որ հետեւելով զարգացումներին՝ մեծ ցավ է ապրում՝ հաղորդ դառնալով բախումների հետեւանքով մարդկային կորուստներին եւ պատճառված ավերածություններին, կրոնական անհանդուրժողականության դրսեւորումներին։

Նորին Սրբությունը նշեց, որ հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում բազում ողբերգություններ, ավերածություններ եւ կոտորածներ է տեսել, սակայն հավատքով հաղթահարել է իր կյանքի բոլոր մահերը եւ հարություն առել Զրիստոսի հավատքով։ Գարեգին Բ Հայրապետը վստահություն հայտնեց, որ Աստծու օրհնությամբ եւ օծանդակությամբ Իրաքի ժողովրդի ամուր, հաստատուն կամքով կհաղթահարվեն բոլոր դժվարությունները, եւ կվերադառնան Իրաքի փառքի օրերը, խաղաղ եւ երջանիկ կյանքը։ Այս մաղթանքով Վեհափառ Հայրապետն իր բարձր գնահատանքը հայտնեց հոգեւոր եղբայրներին ի Զրիստոս, որ շարունակում են մնալ իրենց հավատավոր հոտի կողքին՝ հույսով եւ հավատով լցնելով նրանց կյանքը դեպի վաղվա օրը։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձ կատարեց նաեւ հայ եւ արաբ ժողովուրդների միջեւ առկա դարավոր եղբայրական հարաբերություններին, հաշտ եւ համերաշխ գոյակցությանը, ինչպես նաեւ Մերծավոր Արեւելքի երկրներում եկեղեցիների եւ կրոնական այլ հարանվանությունների հետ Հայ եկեղեցու ունեցած ջերմ կապերին։ Այս կապակցությամբ Հայոց Հայրապետն իր շնորհակալական խոսքն ուղղեց Իրաքի իշխանություններին՝ ի դեմս հանդիպմանը ներկա նախարար Զաչաչի՝ հայ համայնքին եւ թեմին ցուցաբերվող մշտական աջակցության եւ գորակցության համար։

Նորին Սրբությունը նաեւ գնահատանք հայտնեց Ավագ սրբազանին՝ գեղեցիկ նախածնության համար՝ հավելելով, որ նման այցերն ու մեկտեղումները զորացնում են միմյանց։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Աստված ամուր, անսասան եւ օրհնյալ պահի եղբայրական կապերն ու գործակցությունը Զրիստոսեական եկեղեցիների եւ այլ կրոնների միջեւ։

Զրույցի ընթացքում հանդիպման համար իր շնորհակալությունը հայտնեց Իրաքի քրիստոնեական ավանդապահությանը նախարար տիար Ռաադ Զաչաչին՝ փոխանցելով նաեւ Իրաքի պետության ջերմ ողջույնները եւ Իրաք այցելելու հրավերը։ Նախարարն իր խոսքում անդրադարձ կատարեց պետության հետ կրոնական համայնքների կապերի եւ գործակցության, ինչպես նաեւ պետության կողմից իրականացվող վերականգնողական ու կառուցողական աշխատանքների եւ ցուցաբերվող գորակցության մասին։ Այս առնչությամբ Նորին Սրբությունը հաստատեց, որ այսօրվա պայմաններում հոգատար վերաբերմունքը համայնքների նկատմամբ առավել չափով կարեւոր է։

Մուսուլի, Երբուկի եւ Զրդական մարզի Ասորի եկեղեցու առաջնորդ Նիկողիմոս արք. Տաուտ Շարաֆը, Իրաքի Կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Ժան արք. Բենիամին Սուլեյմանը, Իրաքի Կաթոլիկ Ասորի եկեղեցու առաջնորդ Եփրեմ Յուսուֆ արքեպիսկոպոսը, Երիցական եկեղեցու երեց Յուսուֆ Ջեմիլ Էլ-Սազգան եւս իրենց սրտի խոսքն ուղղեցին Ամենայն Հայոց Հայրապետին՝ հանգամանորեն ներկայացնելով Իրաքում տիրող դժվարին իրավիճակը, քրիստոնեական համայնքների դիմագրաված մարտահրավերները։ Հոգեւոր առաջնորդները հայցեցին նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի աղոթքները Իրաքում խաղաղության վերահաստատման համար։

Հանդիպմանը ներկա էր Արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը։

Կրթության մշակների օրհնության կարգ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Օգոստոսի 31-ին՝ 2017-2018 թթ. ուսումնական նոր տարեշրջանի նախօրեին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ կրթության մշակների օրհնության կարգ։ Կրթական ոլորտի երախտավորների օրհնության ավանդության սկիզբը դրվել է 2010 թվականին։

Մինչ օրհնության կարգը ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանը եւ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը հանդիպում ունեցան Հայոց Հայրապետի հետ։

Մայր տաճարում արարողությանը ներկա էին Ազգային ժողովի կրթության, գիտության, սպորտի եւ երիտասարդության մշտական հանձնաժողովի անդամներ, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության աշխատակիցներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարներ, պետական կրթական կառույցների եւ մարզպետարանների ներկայացուցիչներ, մարզերի հանրակրթական դպրոցների եւ մանկապարտեզների տնօրեններ։

Օրհնելով կրթության ոլորտի պատասխանատուներին եւ մշակներին՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն արարողության ավարտին նրանց հղեց նաեւ իր հայրապետական պատգամը։

«Սրտի բերկրանքով ողջունում

ենք ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ մեր ժողովրդի նվիրական այս սրբավայրում։ Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում եւ շնորհավորում ձեզ, ինչպես եւ կրթության բնագավառի բոլոր նվիրյալներին՝ Գիտելիքի օրվա եւ 2017-2018 ուսումնական նոր տարեշրջանի մեկնարկի առիթով։

Ամառային հանգստյան օրերից հետո կրթական մեր հաստատությունները, ահավասիկ, կրկին իրենց դռներն են բացում մատաղ սերնդի առջեւ, որպեսզի գիտելիք եւ իմացություն փոխանցեն եւ կրթեն նրանց միտքն ու հոգին։

Գիտելիքն ու ուսումը միշտ էլ առաջնահերթություն են եղել մեր ժողովրդի համար, եւ շնորհիվ կրթության մեր կյանքի մնայուն ընկերակից են եղել գիրն ու գրակա-



Գեւորգյան հոգեւոր ճեմարանն աստվածաբանության ոլորտում սկսում է ասպիրանտական կրթություն

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանը, ՀՀ ԿԳ նախարարի կողմից 2016-ի հոկտեմբերի 6-ի համար 987 Ա/2 որոշման համաձայն, ստացավ ասպիրանտական կրթություն իրականացնելու իրավունք։

Որպես երկարամյա տղնաջան աշխատանքի արդյունք՝ 2017-2018 ուսումնական տարում ԳՀԾ պատմության մեջ նոր էջ է բացվում։ Ծեմարանն աստվածաբանության ոլորտում սկսում է ասպիրանտական կրթություն։ ԳՀԾ ասպիրանտուրայի նպատակն է զարկ տալ աստվածաբանության գիտաճյուղերի զարգացմանը, ապահովել ՀՀ աստվածաբանության ոլորտում բարձր որակավորում ունեցող գիտնական հոգեւորականների եւ աշխարհականների ներկայությունը, ինչպես նաեւ աստվածաբանական գիտությունների բնագավառում գիտական հետազոտությունների իրականացումն ու զարգացումը։

Գեւորգյան հոգեւոր ճեմարանում ասպիրանտուրայի ընդունելությունը մրցութային է եւ իրականացվում է ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա։ Ասպի-

րանտուրա կարող են ընդունվել Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու գավառի հանդիսացող անձինք, ովքեր ունեն մագիստրոսի աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում։ ԳՀԾ ասպիրանտուրան գործում է առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի։ Ասպիրանտուրայում ուսուցվում 2017-2018 ուս. տարում իրականացվելու է հեռակա կարգով եւ վճարովի հիմունքով։ Հեռակա ուսուցմամբ վճարովի հիմունքներով ասպիրանտուրայում հետազոտողի քառամյա կրթական ծրագրով ուսման տարեկան վարձը 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ է։

Ասպիրանտուրա ընդունվելու համար անձի դիմումը լրացվում է ԳՀԾ քարտուղարությունում կամ առցանց՝ gevorgianseminary.am կայքում՝ կցելով հետեւյալ փաստաթղթերը.

1. ինքնակենսագրություն, անձնագրի պատճեն եւ լուսանկար (3x4 չափսի),
2. մկրտության վկայական,
3. բակալավրի եւ մագիստրոսի դիպլոմներն ու դրանց հավելվածները,

նակ՝ ազնվության, արդարության ու մարդկային ամեն բարձր արժանիքների։ Այս մեծ երջանկությունն ու պատասխանատվությունն եք ապրում դուք, սիրելիներ, ձեր ծառայագործության մեջ։ Ձեր ջանքերով կրթված ու պատրաստված սերունդն է, որ մեր օրերի արագափոփոխ զարգացումներում հոգեւոր եւ մտավոր ներուժ եւ քաջություն կունենա ապահովելու մեր ժողովրդի ու պետականության շարունակականությունը եւ անընդմեջ զորացումն ու առաջընթացը։

Սուրբ Մաշտոցի ոգով լեցուն այս օրը, երբ դուք ուխտավորաբար եկել եք Մայր Աթոռ Սուրբ Էջմիա-



ոգի եւ պատասխանատվություն։ Այս ըմբռնմով եւ զգացումով է առ Աստված, որ կրթության մշակներից անպակաս լինի ծառայության եռանդը, եւ Տերը պարգևի ձեզ իմաստության առատ շնորհներ՝ ուսումնական նոր տարում արդյունավորելու ձեր նվիրյալ ջանքերը՝ հանուն մեր նոր սերնդի որակյալ կրթության եւ մեր հայրենիքի եւ ի սփյուռն աշխարհի մեր ժողովրդի բարօր ապագայի։ Մեր հորդորը եւ պագամը ձեզ բերում ենք առաքյալի խոսքով. «Ըո անձը... օրինակ դարձնու բարի գործերի համար, ուսուցման մեջ պահիր անեղծություն, սրբություն, պարկեշտություն» (Տիմ. Բ. 7)»,- ա-սաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ խոսքն ամփոփելով սուրբ Ներսես Շնորհալիի Հայրապետի «Իմաստություն Հոր՝ Հիսուս» աղոթքով։

Վերջում տեղի ունեցավ նաեւ ընդունելություն։

4. օտար լեզու, նաեւ ինֆորմատիկա եւ տեղեկատվահաղորդակցական հիմունքներ առարկաների տատետավորման վկայականները կամ դրանց համապատասխան տեղեկանքները.

- 1) անգլերեն - «TOEFL» (IBT)՝ 46, եւ «IELTS»՝ 5.5 միավոր,
- 2) ֆրանսերեն - «TCF»՝ 200 միավոր,
- 3) գերմաներեն - «on DaF»՝ 60 միավոր,
- 4) ինֆորմատիկա եւ տեղեկատվահաղորդակցական հիմունքներ -25 միավոր,
5. աստվածաբանական գիտությունների շրջանակներում գրավոր գիտական աշխատանք (իրատարակված կամ անտիպ, pdf կամ word ձևաչափով)։

Ասպիրանտուրայի դիմորդների փաստաթղթերն ընդունվում են 2017 թ. հոկտեմբերի 1-ից հեկտեմբերի 1-ը ներառյալ՝ ամեն օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, ժամը 10:00-16:00:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ասպիրանտուրայի բաժնի, հեռ.՝ 010 517 180 189:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների նոր նշանակումներ։

Սիփան վրդ. Գեւորգյանը, ազատվելով Հայ եկեղեցու համաշխարհային երիտասարդաց

միավորման (ՀԵՀԵՄ) հոգեւոր պատասխանատուի պարտականություններից, ծառայության է կոչվել Իսպանիայի հայոց համայնքում՝ Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատմիկայի իշխանության ներքո։

Չավեն վրդ. Յազիգյանն ազատվել է Մյանմարի, Սինգապուրի եւ Դաքքայի հոգեւոր

հովվի պարտականություններից եւ իր ծառայությունը կշարունակի որպես Մայր Աթոռի լուսարարապետի օգնական։

Դիվանատան հասարակական կառույցների հետ հարաբերությունների գրասենյակի տնօրեն Վազգեն արք. Պետրոսյանը, ազատվելով իր պարտականություններից, մեկնել է Գերմանիա՝ ուսումնառությունը շարունակելու նպատակով։

Սեպտեմբերի 7-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսը երկօրյա այցով մեկնեց Մոսկվա, ուր մասնակցեց տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպմանը:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Յովհաննիսյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերություններ-

հնարավոր դարձավ մեր հոգեւոր եղբայր ի Զրիստոս Կիրիլ Պատրիարքի միջնորդական հետետողական ջանքերի շնորհիվ: Վեց տարի է անցել այս ձեռագրով մեր վերջին հանդիպումից, որը տեղի ունեցավ Երեւանում 2011 թ. նոյեմբե-



րի բաժնի տնօրեն Շահե Շ. վրդ. Անանյանը, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ Գեւորգ Դանիելյանը, գավազանակիր Աղան արք. Երնջակյանը եւ Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քնն. Մելիքյանը:

Սեպտեմբերի 8-ին տեղի ունեցավ եռակողմ հանդիպումը:

Ն Ս Օ Տ Տ ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՐԷ ՏԱՐԱԾԱՐԳՈՒՄԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԵՌԱԿՐՈՐ ՀԱՐԴԻՊՄԱՆԸ

Ձե՛րդ Սրբություն Մոսկվայի եւ Յամայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարք, Կովկասի մահմեդականների վարչության նախագահ հարգաբաժան շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուբյուր Փաշա Չաղե, ողջունում ենք Ձեզ տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների հերթական այս հանդիպմանը, որը

րին՝ ԱՊՀ Միջկրոնական խորհրդի նախագահության ժողովի առիթով:

Այս հանդիպումներին մեր ժողովուրդների կյանքում բաղձալի խաղաղության հաստատման հույսով ենք քայլերն անում՝ քննարկելու ուղիները, որոնցով հոգեւոր առաջնորդներս կարող ենք նպաստել դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը:

Այսօր, ցավով, զգալի չեն ներդրվող ջանքերի արդյունքները, սակայն շատ ավելի մեծ եւ առարկայական են մեր ժողովուրդների սպասումները՝ խաղաղ համակեցության այս փնտրտուքի մեջ:

Այս առումով դրական արդյունքներ ենք ակնկալում ժամանակ առ ժամանակ կազմակերպվող Յայաստանի եւ Ադրբեջանի նախագահների եւ ԱԳՆ նախարարների հանդիպումներից ու բանակցային ողջ գործընթացից:

Հակառակ Յայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումների արդյունքում կատարվող հայտարարությունների, հոգեւոր առաջնորդներին կոչերի եւ պատ-
հաններին, այսօր հրադարձարի պայմաններում շարունակում է լարված մնալ իրավիճակը սահմանագծում, շարունակում են զոհվել զինվորներ եւ երբեմն նաեւ սահմանամերձ բնակավայրերի խաղաղ բնակիչներ: Հատկապես մտահոգիչ ենք համարում քաղաքացիական բնակչության թիկունքում պատսպարվելու եւ այն միտումնավոր թիրախի վերածելու դեպքերը:

Սահմանից անդին չեն դադարում ռազմատենչ կոչերը, աճող սպառնազնության վերաբերյալ հայտարարությունները: Այս ամենը մեծապես վտանգում է փոխվստահության եւ փոխըմբռնողության ոգու մթնոլորտի ձեւավորմանն ուղղված ջանքերը եւ, սասանելով արդեն իսկ փորձը հրադարձար, վերափոխում հակամարտության ուժգնացման մի նոր իրողության, որին ականատես դարձանք 2016 թվականի ապրիլին, երբ ադրբեջանական զինված ուժերի կողմից սանձազերծվեցին լայնամասշտաբ ռազմական գործողություններ: Ամենքիս հայտնի է այդ օրերի ժամանակագրությունը՝ փաստագրված նաեւ միջազգային հանրության կողմից, մարտի դաշտում զոհված զինվորների, ինչպես նաեւ խաղաղ բնակչության նկատմամբ կատարված խոշտանգումները, վայրագություններն ու բռնությունները, պատճառված կորուստներն ու ավերակները:

Մտաբերելով այս դեպքերը՝ բնական հարց է ծագում. ինչպե՞ս կարող են պահպանվել իրավիճակի կայունությունը ու խաղաղությունը, երբ այդ ուղղությամբ գործադրվող ջանքերը միակողմանի են: Ինչպե՞ս կարող ենք հասնել խաղաղության, երբ ջանք եւ միջոց չի խնայվում բոլոր հնարավոր եւ անհնարին ճանապարհներով սեփական բնակչության մեջ ատելություն ու թշնամանք սերմանելու հարեւան հայ ժողովրդի նկատմամբ, իսկ հայկական կողմի եւ միջազգային հանրության արդարացի եւ օբյեկտիվ գնահատականները հակադարձելու ան-

հիմն մեղադրանքների համար:

Մեր տարածաշրջանում խաղաղությունն այլընտրանք չունի, ինչպես եւ դարաբաղյան հակամարտության կարգավորումը՝ բացառապես բանակցությունների միջոցով: Այլընտրանք չունի նաեւ Արցախի մեր հավատավոր ժողովրդի ազատ եւ անկախ կյանքը:

Այսօր հրամայական է, որ կամք եւ հանձնառություն դրսևորվի՝ հիմնախնդրի լուծումը փնտրելու միմիայն բանակցային հարթության մեջ եւ կասեցնելու հրադարձար-

խաղաղ կարգավորման գործընթացի առաջխաղացումը: Միեւնույն ժամանակ մեր հանապազ հորդորը պետք է բերենք զինվորականներին՝ պահպանելու հրադարձար եւ խուսափելու սադրանքներից:

Մենք մեծապես կարեւորում ենք միջազգային հանրության դերակատարությունը, մասնավորապես՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի առաքելությունը, հակամարտության շփման գծում վերահսկողական մեխանիզմների կիրառման եւ սահմանային միջադեպերի հետաքննության հար-



րի խախտման դրսևորումները, սահմաններից հեռացնելու դիպուկահարներին, դադարեցնելու անդադար գնդակծումները եւ այլեւս պատճառ չդառնալու հրադարձարի պայմաններում ընտանիքների դժբախտացման՝ անվտանգ պահելով մեր զինվորագրված զավակների կյանքը: Յուրաքանչյուր փամփուշտ, որ արձակվում է Աստծո առարածի դեմ, նաեւ Աստծո դեմ է:

Հենց այստեղ ենք տեսնում մեր՝ հոգեւոր առաջնորդներին, առաքելությունը՝ հորդորելու եւ պատգամելու, մեր լծակիցների հետ մեկտեղ ձեւավորելու այն գիտակցությունը եւ փոխըմբռնման ու հանդուրժողականության մթնոլորտը, որոնց պայմաններում հնարավոր պիտի դառնա հակամարտության

ցում: Մեր երախտագիտությունն ենք հայտնում Կիրիլ Ա Պատրիարքին եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցուն՝ հակամարտության առաջին իսկ օրվանից դրսևորած սրտացավության եւ միջնորդական ջանքերի համար:

Աստծուն հաճելի են արդարության եւ խաղաղության ճանապարհներով ընթացողները, որովհետեւ այդտեղ են Նրա սերն ու օրհնությունը, հովանին ու ողորմությունը, ինչպես Ս. Գիրքն է ասում. «Արդարության պտուղը խաղաղությամբ է սերմանվում նրանց համար, ովքեր խաղաղություն են անում» (Հակ. Գ 18): Ուստի մեկտեղենք մեր ջանքերը ու միասնաբար ընթանանք այդ ճանապարհներով: Այս գործընթացի մեջ պատասխանատվություն ունենք ամենքս: Շարունակությունը՝ էջ 4

Միջազգային Էկումենիկ Կոնֆերանս Բոսնի վանքում

Սեպտեմբերի 6-9-ը Իտալիայի Բոսնի վանքում տեղի ունեցավ 25-րդ միջազգային Էկումենիկ կոնֆերանսը: Զատօրյա կոնֆերանսը կրում էր «Յուրընկալությունը որպես պարզեւ» խորագիրը եւ նվիրված էր հյուրընկալության քրիստոնեական հասկացությանն ու դրա սուրբգրային, հայրախոսական, աստվածաբանական, վանական ու կանոնական ըմբռնումներին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսի օրինությամբ՝ կոնֆերանսին Յայոց Եկեղեցին ներկայացրեց Իտալիայի հայոց հոգեւոր հովիվ եւ Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի փո-

խանորդ Թովմա վրդ. Խաչատրյանը:

Կոնֆերանսը բացվեց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբությանն Բարդուղիմեոս Ա-ի բանախոսությամբ: Ժողովական օրերին նաեւ ընթերցվեցին տարբեր ավանդական Եկեղեցիների հոգեւոր պետերի շնորհավորական ուղերձները:

Հայր սուրբը եւս ներկաներին փոխանցեց Ամենայն Յայոց Կաթողիկոսի հայրապետական պատգամն ու շնորհավորությունները՝ շնորհակալություն հայտնելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու Նորին Սրբություն Գարեգին Բ Յայրապետի նկատմամբ դրսևորած ջերմ վերաբերմունքի համար:



Խաղաղության աղոթք Մայր տաճարում



Սեպտեմբերի 10-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսի, Մայր տաճարում մատուցված Պատարագի ավարտին կատարվեց միջեկեղեցական աղոթք-մաղթանք՝ նվիրված Մերձավոր Արեւելքում խաղաղության հաստատմանն ու ամրապնդմանը:

Խաղաղության աղոթքին ներկա էին Իրաքի հայոց թեմի առաջնորդ Ավագ արք. Ասատուրյանի նախածնունդությամբ Իրաքից Մայր Աթոռ ժամանած Իրաքի կրոնապետների եւ քրիստոնեական ավանդապահությանց նախարար տիար Ռաադ Զաչիի պաշտոնական պատվիրակու-

թյունը, ինչպես նաեւ Յայաստանի Հանրապետությունում հավատարմագրված Մերձավոր Արեւելքի երկրների դեսպաններ ու հավատարմատարներ:

Արարողությունից առաջ խոսքով հանդես եկավ Իրաքահայոց թեմի առաջնորդ Ավագ արքեպիսկոպոսը, այնուհետեւ ներկա չորս կրոնապետներից յուրաքանչյուրն իր աղոթք-մաղթանքը բերեց Մերձավոր Արեւելքում, մասնավորապես Իրաքում խաղաղության հաստատմանն ու կրոնական հանդուրժողականության ամրապնդման համար:

Միջեկեղեցական աղոթքն ավարտվեց Վեհափառ Յայրապետի Պահպանիչ աղոթքով:



Սկիզբը՝ էջ 3

Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Բարձրյալն Աստված եւ հայցում, որ օրինի եւ արդյունավորի բոլոր անհատների, հասարակական կառույցների ու կազմակերպությունների այն նախաձեռնությունները, որոնք ուղղված են ազգամիջյան հարաբերությունների վերականգնմանը, համերաշխության զորացմանը եւ փոխվստահության մթնոլորտի ձեւավորմանը: Թող Բարձրյալի օրհնությամբ աշխարհում եւ մեր ժողովուրդների կյանքում միշտ գերակայի հաշտության ոգին, եւ պտղաբերեն փոխըմբռնումն ու բարի կամեցողությունը:

Շնորհակալություն այս հանդիպման համար:

Հանդիպման արդյունքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքը եւ Կովկասի մահմեդականների վարչության նախագահ շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա Չադեն հանդես եկան հետեւյալ հայտարարությամբ:

ԱՊՐԵՋԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՏԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԵՌԱԿՈՎՄ ՎՏԻՎՊՄՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր մենք՝ արքեպիսկոպիտ եւ հայ ժողովուրդների հոգեւոր առաջնորդներս, կրկին հանդիպեցինք Մոսկվայում՝ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի հրավերով՝ քննարկելու դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղիները, առանց որոնց հնարավոր չէ հասնել Կովկասում հաշտության եւ անվտանգության:

Տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպումը Մոսկվայում



Մենք հատուկ նշանակություն ենք ընծայում խաղաղարարական երկխոսության հետեւողական զարգացմանը, բանակցությունների շարունակմանը եւ միջազգային հանրության միջնորդական ջանքերին, որոնք կօգնեն հասնել հակամարտության համապարփակ կարգավորմանը:

Համոզված ենք, որ տարածայնությունները կարելի է հաղթահարել՝ հենվելով բարիդրացիության սկզբունքների եւ ավանդական կրոնների կողմից քարոզվող բարոյական արժեքների՝ բարության, մեղմավորի նկատմամբ սիրո, փոխադարձ ներողամտության եւ բարեգոյության վրա:

Հայ եւ աղբյուրների ժողովուրդները մշտապես ապրելու են կողք կողքի, այդ իսկ պատճառով չկա այլընտրանք, քան խաղաղությունն ու համագործակցությունը: Բազմա-

թիվ մարտահրավերների առջեւ մենք՝ մեր ժողովուրդների հոգեւոր առաջնորդներս, պարտավոր ենք փնտրել համատեղ պատասխաններ:

Աղոթում ենք խաղաղության պահպանման եւ հակամարտության հետ առնչված բոլոր հումանիտար խնդիրների շուտափույթ լուծման համար եւ առ այդ հորդորում մեր ժողովուրդների քաղաքական եւ հասարակական գործիչներին:

Մենք կոչված ենք միասին հոգ տանելու տառապալների եւ ընչազուրկների համար, վկայելու հոգեւոր եւ բարոյական անանց արժեքների մասին, փնտրելու հակասությունների հանգուցալուծման խաղաղ եւ արդար ուղիներ: Խիստ կարեւոր է հրաժարվել ռազմատենչ եւ թշնամական հռետորաբանությունից:

Կոչ ենք ուղղում համապատասխան անձնաց՝ նպաստելու բոլոր

այն խաղաղ բանկիչների ազատ արձակմանը, ովքեր չեն մասնակցել ռազմական գործողություններին եւ հայտնվել են գերության մեջ:

Իբրեւ հոգեւոր առաջնորդներ՝ մենք կոչված ենք պաշտպանելու եկեղեցիները, մզկիթներն ու այլ սրբավայրերը: Հետեւաբար, խիստ կարեւոր է ապահովել կրոնական նշանակության հուշարձանների անձեռնմխելիությունն ու հարգալից վերաբերմունքը դրանց նկատմամբ:

Կոչ ենք ուղղում մեր ժողովուրդներին՝ երիտասարդությանը դաստիարակել բարյացակամության եւ փոխադարձ հարգանքի, խաղաղասիրության եւ ավանդական բարոյականության ոգով:

Մենք՝ որպես հոգեւոր առաջնորդներ, մեր կողմից պատրաստականություն ենք հայտնում պաշտպանելու դարաբաղյան հակամարտության հանգուցալուծմանն ուղղված խաղաղարարական նախաձեռնությունները: Հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպումների պատմությունը վկայում է նման շփումների դրական ներգործության մասին համարադրական կարգավորման գործընթացի վրա, որը երբեք չպետք է վերաճի կրոնական հակամարտության: Մենք մեծ հույսեր ենք կապում բանակցային գործընթացի հետ: Մեր ժողովուրդների առջեւ պատասխանատվությունն ու պարտքը մղում են մեզ՝ հոգեւոր առաջնորդներին, անխոնջ եւ հետեւողական ջանքեր գործադրել հանուն խաղաղության եւ բարու իդեալների երկար սպասված հաղթության:

Մենք պատրաստ ենք գործադրել բոլոր առկա հնարավորությունները՝ տարածաշրջանում խաղաղության հաստատման համար:

Մեր համայնքների բոլոր զավակներին ուղղում ենք խաղաղության, բարօրության եւ բարի ձեռնարկումներում հաջողությունների բառեմղանքներ: Աղոթում ենք Բարձրյալին՝ տարածայնությունների հաղթահարման եւ չարիքից ու մեղքից մեր ժողովուրդներին պահպանելու համար: Թող Կովկասի հիսավորք եւ սուրբ հողի վրա հաստատվի օրհնյալ խաղաղությունը, իսկ մեր երկրների ժողովուրդներն ապրեն հաշտ եւ խաղաղ, աստվածատուր բարոյական օրենքներով:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատվիրակությունը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին Բ, Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, եւ Կովկասի մահմեդականների վարչության պատվիրակությունը՝ շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա Չադեի գլխավորությամբ, հատուկ շնորհակալություն են հայտնում Ռուս Ուղղափառ Եկեղեցուն եւ նրա գահակալ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Նորին Սրբություն Կիրիլ Պատրիարքին՝ տվյալ եռակողմ հանդիպման կազմակերպման, Կովկասում խաղաղության հաստատման գործում կարեւորագույն ներդրման համար եւ Նորին Սրբությանը մաղթում Բարձրյալի օգնականությունը՝ աստվածահաճո այդ բարձր առաքելությունը շարունակելու գործում:

Գետրգյան հոգեւոր ճեմարանի 2017-2018 թթ. ուսումնական տարվա բացումը

Սեպտեմբերի 12-ին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գետրգյան հոգեւոր ճեմարանի 2017-2018 թթ. ուսումնական տարվա բացումը:

Միասնական՝ Տերունական աղոթքից հետո կատարվեց ուսանողների օրհնության կարգ:

Բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի տեսուչ Գաբեգին վրդ. Համբարձումյանը: Շնորհավորելով նոր ուսումնական տարվա մեկնարկի առիթով՝ նա տեղեկացրեց, որ այս տարվա 48 դիմորդներից ճեմարան է ընդունվել 18 սան, եւս 18-ը՝ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցից:

Հարց-գիտական, հրատարակչական եւ մշակութային ծրագրերին: Ճեմարանի համար այս տարին նշանակալի է նաեւ նախորդ տարի հաստատված ասպիրանտական կրթության մեկնարկով:

Հանդիսությամբ կոմիտայան երգերով հանդես եկավ ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ Արթուր սրկ. Վարդանյանի: Իսկ Արարատյան հայրապետական թեմի երիտասարդաց միության լարային քառյակի կատարմամբ հնչեց Ա. Վիվալդիի «Տարվա եղանակներից» «Ամառը»:

Հանդիսությունն ամփոփվեց Նորին Սրբություն Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Վեհափառ Հայրապետն իր բարեմաղ-

դովորդի՝ հաղթահարում փորձություններ, համբերությամբ ու ըմբռնումով տանում նաեւ գրկանքներ եւ Տիրոջ սերն ու խաղաղությունը սփռում իր հավատավոր հոտի, իր ժողովրդի կյանքում», - ասաց Վեհափառ Հայրապետը՝ հավելելով, որ այսպիսի ընկալումով դասախոսները տեսչության գլխավորությամբ պիտի իրականացնեն հոգեւորական կրթելու եւ դաստիարակելու առաքելությունը:

Հայոց Հովվապետը հորդորեց ճեմարանականներին նույն այդ գիտակցությամբ առաջնորդվել իրենց ուսումնառության մեջ՝ Սուրբ Եկեղեցու արժանավոր մշակ դառնալու՝ օրինակ ունենալով հայոց լուսավորիչներին, թարգմանիչ վարդապետներին, Նարեկացուն, Շնորհա-

«Խաղաղության ուղիներ. կրոններն ու մշակույթները երկխոսության մեջ» միջազգային համաժողով Գերմանիայում



Սեպտեմբերի 10-12-ը Գերմանիայի Մյունստեր եւ Օսնաբրյուք քաղաքներում տեղի ունեցավ «Խաղաղության ուղիներ. կրոններն ու մշակույթները երկխոսության մեջ» միջազգային համաժողովը՝ կազմակերպված Սանտ Էջիդիո միջազգային խաղաղարար կազմակերպության կողմից:

Համաժողովին մասնակցում էին տարբեր կրոնների եւ միջազգային կազմակերպությունների հարյուրավոր ներկայացուցիչներ: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ համաժողովին իր մասնակցությունը բերեց Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի հայոց թեմի առաջնորդ Հովակիմ եպս Մանուկյանը:

Համաժողովի հանդիսավոր բացմանը Մյունստերի եպիսկոպոս Ֆելիքս Գեկսի եւ Մյունստերի քաղաքապետ Մարկուս Լեւեի ողջույնի խոսքերից հետո ընթերցվեց Հռոմեակաթոլիկ Եկեղեցու Զահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի ուղերձը, ապա խոսքը տրվեց հիմնական բանախոսներին՝ Սանտ Էջիդիոյի հիմնադիր Անդրեա Ռիկարդիին, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելին, Նիգերի Հանրապետության նախագահ Մահամադու Իսուֆուին, Եվրոպական Խորհրդարանի նախագահ Ալեքսանդր Սայանիին եւ Ալ-Ազ-Հարի (Եգիպտոս) գերագույն իմամ Ահմադ Մուհամադ Ալ-Թայեբին:

Համաժողովի առաջին օրը բանախոսություններով հանդես եկան Կոլումբիայի համալսարանի երկրաբանական ինստիտուտի տնօրեն դոկտ. Ջեֆրի Սաչսը՝ ԱՄՆ-ից, Սանտ Էջիդիո համայնքի անդամ Ալբա Ռուիս դե Անդրեալ՝ Իսպանիայից, Աստիլիցի եւ Համայն Արեւելքի Հույն Ուղղափառ Պատրիարք Հովհաննես Ժ-ն, Ֆրանկֆուրտի ռաբբի Ալիվայի Ապելը եւ Ռիսշո Կոսեի Կաի Բուրդիզադի նախագահ Կոշո Նիվանոն՝ Ճապոնիայից:

Համաժողովի երկրորդ օրը «Բրիտանական նահատակություն. անցյալը եւ ներկան» թեմայի շուրջ բանախոսությամբ հանդես եկավ Հովակիմ եպիսկոպոսը: Տեղի ունեցան նաեւ մի շարք քննարկումներ, որոնց իրենց մասնակցությունը բերեցին տարբեր կրոնների ու կրոնական համայնքների ներկայացուցիչներ:

Համաժողովն ավարտվեց սեպտեմբերի 12-ին՝ խաղաղության թափորով եւ խաղաղության հաստատման կոչով:

Լրատվական նյութերը՝ ՄԱՅՐ ԱՌՈՒ ՍՈՒՐԷ ԷԶՄԻԱՍՏԻ ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ



Անդրադառնալով ճեմարանի դերին ու առաքելությանը՝ հայր սուրբը նշեց, որ այստեղ ձեւավորվում է հայ ազգի հոգու ապագա մշակը, որի համար մարդակերտման ու հոգեկերտման կարեւորագույն որակ պիտի դառնա մղումը. «Ի չիք են ամեն գիտելիք եւ ուսում, եթե դրանք միտված չեն այլոց կյանքի մեջ բարերար ներդրում ունենալուն, եթե դրանք ձեռք չեն բերվում այն գիտակցումով, որ ամեն պարգեւ Տիրոջից է եւ Նրան պիտի դարձվի», - ընդգծեց հայր Գաբեգինը՝ տեղեկացնելով նաեւ արձակուրդային շրջանում քարոզչական, հովվական, կրթական եւ սոցիալական տարբեր ծրագրերում ճեմարանականների ունեցած ակտիվ մասնակցության մասին: Տեսուչն անդրադարձավ նաեւ առաջիկա ուսումնական տարում իրականացվելիք մի

թանքն ու շնորհավորանքները փոխանցեց նոր ուսումնական տարեմուտի առիթով՝ նշելով, որ այս իրադարձությունն ամեն անգամ նոր հույսեր ու տեսլականներ է ձեւավորում, որոնք աղոթքով ու գործով պիտի իրականություն դառնան եւ արդյունքներ պարգեւեն մեր ազգին եւ Եկեղեցուն:

Անդրադառնալով հոգեւորականի կերպարին՝ Նորին Սրբությունն ընդգծեց, որ Հայոց Եկեղեցին մեծապես կարեւորել է, եւ ժողովուրդը մեծապես ազգային կյանքում հավանքով գորել, գիտելիքներով զինված, սիրո ու անձնվիրումի ոգով գործող հոգեւորականի սպասավորությունը: «Բրիտանիայի հավատարիմ սպասավորը չի բնորոշվում սոսկ իր կրած սքեմով, այլ ինքն է արժեւորում իր կոչումն ու համագրեւոր, արգասավորում իր ստանձնած առաքելությունը, ի սեր Աստծո եւ ժո-

լուն, Կոմիտասին եւ բազում այլոց, որոնց փառքն ու գործը շողարձակել են հայոց պատմության դարավոր ընթացքում:

Նորին Սրբությունն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց տեսչությանը, դասախոսական կազմին եւ ուսանողներին՝ մաղթելով, որ Աստծո Աջը հովանի լինի ամենքին եւ առաջնորդի ուսումնական կյանքի ճանապարհով՝ ապահովելով բարի արդյունքներ:

Բացման հանդիսությունը փակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պահպանիչ աղոթքով եւ Հայրապետական մաղթերով:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Մայր Աթոռի հոգեւորկրթական հաստատությունների տեսչական ու դասախոսական անձնակազմերը, ճեմարանի ասնեղը եւ այլ հրավիրյալներ:

**Ե. ՉԱՐԵՆՑԻ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ
ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին

Սկիզբը՝ թիվ 14-16

Միջայել Մազմանյանի հուշերում պահպանվել է այսպիսի վկայություն. «1921-1922 թթ. Չարենցը կազմում էր «Դիմակներ» վերնագրով մի գիրք, որտեղ գտեղիելու էր հայ բանաստեղծների ստեղծագործական բնութագրերը: Նա ուրվագծել էր իր այդ աշխատությունը եւ մասամբ գրել: Շարքն սկսվում է Պետրոս Դուրյանով, ապա գալիս էին Թումանյան, Իսահակյան, Սեծանց, Սիամանթո, Տերյան եւ այլք: Մոտ տասներկու հոգու ստեղծագործության քննական մի փորձ էր դա (*Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, էջ 63*): Չարենցը թեեւ իր այդ գործը կիսատ է թողել, բայց «մասամբ գրած» էջերից ոչինչ հայտնի չէ: Իսկ այն, որ Չարենցը կարող էր այդպիսի դիմանկարների շարք գրել, շատ հավանական է, քանի որ այդպիսի փորձեր նա արել է նաեւ հետագա տարիներին եւ հատկապես «Գիրք ճանապարհի» ժողովածուի մեջ: Կյս տարիներին այդ ծրագրած շարքը Չարենցը չի ավարտել այն պարզ պատճառով, որ նույն ժամանակ, «Երեքի» դեկլարացիայի ոգուց ելնելով, ժխտական վերաբերմունք ուներ դասականների հանդեպ: Իսկ ժխտումն այս դեպքում ոգեշնչող ուժ չէր կարող լինել:

1924-ին Մոսկվայի Լազարյան ճեմարանի դասիվիճում Չարենցը դիտել է Ռուբեն Սիմոնովի բեմադրած «Մեծապատիվ մուրացկաններ» կատակերգությունը: Ըստ Մազմանյանի սույն հուշերի՝ «...երկար ժամանակ նա [Չարենցը] ինձ հետ խոսում էր եւ տոյկով խմամկներ էր գրում աւրեմտահայ լեզվով» (տույն տեղը, էջ 70): Ռ՛ր եւս այդ նամակները...

գրում է, որ արտասահմանյան շրջագայության ժամանակ Չարենցն իրեն երկու նամակ է գրել. մեկը՝ 1924-ի դեկտեմբերին Կ. Պոլսից, մյուսը՝ մեկ ամիս անց Զոմսից: Կերչինս «...գրված էր տասնվեց երեսի վրա: Սկսվում էր հանգիստ, մարգարտաշար ձեռագրով ու վերջանում հուզված, փոթորկալից եւ երբեմն անընթեռնելի բառերով: <...>: Դժբախտաբար այն այլ նամակների հետ չի պահպանվել»,- շարունակում է հուշագիրը (*Հիշողություններ երիշտ Զարենցի մասին, էջ 72-73*):

Չարեւնցի այս նամակները եւ հատկապէս վերջինն արտակարգ կարեւորություն ներկայացնող մտորումներ պիտի ընդգրկեին, որոնց մէջ բանաստեղծը պիտի շարադրած լինէր արվեստի իր նոր գեղագիտությունը: Այն, ինչը պիտի գար փոխարինելու «Երեքի» դեկլարացիային ու «Standard»-ի ծրագրին եւ հիմնավորել անցումը դեպի վիպականություն ու մոնումենտալիզմ: Այս ենթադրության հիմքը 1925-ին Բեռլինից Բաքվի «Վիշկա» հայերէն ամսագրին հասցեագրած նամակն է:

Մ. Արմենը 1925 թ.՝ Չարենցի հետ առաջին ծանոթությունից հետո, Նրանից նամակ է ստացել: Նա գրում է այդ մասին, նաեւ նամակից մեջբերում անում. «Չարենցն իր խոսքը պահեց, եւ շուտով եւ Նրանից ստացաւ մի մեծ նամակ՝ տասնմեկ էջի վրա: Առաջին իսկ տողերը թունդ հանեցին իմ հոգին: Նա հավանել էր իմ բանաստեղծությունները: <...>: Բայց դրա փոխարեն դառն էր ինձ համար նամակի երկրորդ կետը, ավելի ճիշտ՝ երեք քառորդը: Չարենցն ինձ հայտնում էր, որ տեղեկություն ունի Վանանդեցուն գրած

իմ նամակի մասին: <...> Սա-
կայև, ինձ մի լավ քրտնեցնելուց
հետո, նա ասում էր նաեւ պաշտ-
պանական խոսքեր. «Բայց ես
քեզ չեմ մեղադրում, սիրելի կը-
մեն: Մեղավորը գրական այն մթ-
նոլորտն է, որը հնարավոր է
դարձնում այդպիսի նամակներ
գրելը: Եվ եթե, իրոք, ուզենան քո
հարցը դնել եւ քեզ պատժել կոմե-
րիտմիության գծով, ապա ես
կպահանջեմ, որ ինձ եւս դատեն
քեզ հետ միասին, որովհետեւ
գրական մթնոլորտի հարցում մե-
ղավոր ենք մենք բոլոր...» (Մ. Ար-
մեն, Երկեր, IV, Ե., 1971, էջ 129):

Բնական է, որ նամակը հիշողությամբ մեջբերել հնարավոր չէր: Պետք է ենթադրել, որ այն պահպանվում է Մ. Արմենի պահոցում:

Ականատեսների վկայությամբ՝ կնոջ աճյունը մահից վեց ամիս հետո վերաթաղելու ժամանակ Չարենցը կրա հետ գերեզման է իջեցրել ապակյա երկու շշի մեջ գնումսած գրություններ: Հետագայում եղել են մարդիկ, ովքեր փորձել են գերեզմանի բեռնոնե կաղապարի միջից հանել այդ շշերը, բայց ապարդյուն: Հետագա որոնողներից երկուսը հայտնվել են միլիցիայի գրասենյակում: Սա նշանակում է, որ որոնումները պետք է կատարել պատանակն հսկողությամբ: Իսկ Չարենցի այդ՝ առայժմ հողի տակ նեցող ձեռագրերը բացառիկ արժեք ներկայացնող գործեր պիտի լինեն եւ, ըստ երեւոյթիւն, պիտի արձագանքեն ստեղծագործական այն մասնաւեւմանը, որ կապված է «De profundis» պոեմի հիղաքման հետ:

4. Նորենցը հուշերում մտաբերում է. «Մի անգամ, երբ ես նրա մոտ էի՝ հյուրանոցում, նա ինձ կարդաց մի անտիպ պոեմ՝ «De profundis» վերնագրով: «De pro-



fundis»-ը լույս չտեսավ: Հիմա էլ նրա հետքերը չկան» (*Հիշողություններ Երիշե Զարեցի մասին, էջ 194*): Զարեցն այն գրել է կնոջ մահից հետո՝ հոգեբանական ծանր տրամադրությամբ: Ունեցել է մռայլ խոհական բնույթ: Գրել է բանտում, դրա շուրջ մտորել է բանտից հետո մինչև «Էպիքական լուսաբացի» տպագրությունը, այսինքն՝ 1926-1929 թթ. ընթացքում:

Բանտում գրած պոեմի մասին վկայություն է թողել նաեւ Գ. Մահարին: Մահարին երբոր՝ հորեն Աճմյանի (հորեն Ռադիո) հետ այցելել է Երեւանի ուղիղ տուն՝ Զարեհնիկ տեսակցելու, եւ տեղի է ունեցել այս խոսակցությունը:

«- Զիմա ես քեզ համար կարդամ իմ «Հատուցում»-ը: Զը՞: Կարդա՞մ: Շա՛տ է... ո՞նց ես ապու՞մ, անկումայի՞ն...

Կարդաց: Խոսակցություն բան-
տի պատուհանից Նայող լուսնի
հետ:

...Ու այսպես էր խոսում իմ բարեկամ լուսինը...

Հիշում եմ մի ութնյակ.
Ախ-ախ, հիմար պոետ
Դու միամիտ մանուկ,
Ի՞նչ է, կարծում էիր,
Որ հատուցում էկա,
Կարծում էիր երգը
Բառերի՞ց ես շինում,
Որ ուզես հով երգես

Ուզես՝ չեկա...

Հետազայում այրեց:

Կարմիր կազմով տետր էր:
Կրում էր պոեմի խորագիրը՝
«Հատուցում»: Կային եւ «ստիխ-
ներ»:

Նրանցից մեկը նկարագրում էր իր վախճանը, մահը: Ինքնասպանություն: - Դու ներս կմտնես, կտեսնես ինձ ընկած հատակին, անշնչացած, կողքիս՝ դեռ ծխացող նազանը:

Ու վերջին տողը՝

Դե գրկիր, գրկիր քո քնքուշ
Չարին...

- Բա ինչպե՞ս: Բանտում նստած դիֆերամբ գրեմ, գուցե՝ մա՞րշ...

Այրեց» (Գ. Մահարի, Երկերի

Նույն պոեմն է՝ բանտ, պոետ,
լուսին: Տարբեր է վերնագիրը՝
«De profundis»-ի փոխարեն՝
«Հատուցում», որ նույնն է:

Մահարին ակնարկում է բանտում գրած եւ այրած բանաստեղծությունների մասին, ինչը եւս վավերական մտաբերում է:

Այս պոեմի մասին վկայում է
 նաեւ Խորեն Աճեմյանը: «Մի ան-
 գամ Գուրգենի [Մահարու] հետ
 գնացինք ուղղիչ տուն: Զարեհը
 մեզ նստեցրեց, ինքն էլ տեղա-
 վորվեց անկողնու եւ սկսեց
 կարդալ իր նոր գործերից:

Շարունակությունը՝ էջ 7

ՍԿԻՂԲԸ՝ թիվ 16

III դարի սկզբին՝ 224 թ., Արտաշիր Ա Սասանյանի ապստամբությունը Պարթե Արտավանի դեմ լայն արձագանք գտավ այն դժգոհությունից, որ տիրում էր Իրանի տարբեր խավերում Պարթե Արշակունիների դեմ ոլորտային հեղեթաստիության եւ հեղեթաստական բազմաստվածության պատճառով: Իր տոհմակից Պարթե Արտավան թագավորի սպանության համար Հայոց Խոսրով Մեծ թագավորը, ըստ Ագաթանգեղոսի, տասնմեկ տարի շարունակ վրժմանդիր էր լինում սասանացի Արտաշիրից:

Ըստ Ազաթանգեղոսի՝ Խոսրով Մեծի սպանությունը տեղի է ունեցել 230-ական թվերին, որից հետո Արտաշիրը տիրեց Հայաստանին: Պրոֆ. Ռասսելը մինչև իսկ բերում է Խորենացու Պատմությունից Արտաշիր Սասանյանի հրամանը՝ «զհուրև որմզդական, որ ի վերայ բազմին որ ի Բագաւան, անշէջ քաճամայէ լուցանել» (*James R. Russell. P. 16*), եւ միաժամանակ Արտաշիրը փշրել է տալիս Վաղարշակ թագավորի Արմավիրից Բագարան եւ այնտեղից էլ Արտաշատ փոխադրած արեգակի եւ լուսնի անդրիները (*խոր., Բ. 3Է, էջ 216*), որոնք Ապոլլոնի (Տիր) եւ Արտեմիսի (Աւսհիտ) խորհրդականիշներն էին (*խոր., Բ. ԽԹ, էջ 177*):

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲՐԻՍՏՈՆԵՌՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻՆ

Ջեյմս Ռասսելը հայ ժողովրդի
կրակամղաճռության մասին



հոսրով Մեծից ազատվելու համար Արտաշիրը դավադրությամբ Հայաստան ուղարկեց Պարթև ևախարար Անակին՝ սպանելու Հայոց թագավորին։ Երբ Պարսից թագավորին հասավ սպանության լուրը, Նա «զուարճանայր, զուարթանայր, տոն մեծ ուրախութեան առնէր զօրն զայն, եւ բազում ուխտ ատուշանացն կատարէր» (*Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1909*):

Այստեղ եւս, ինչպէս V դարում արքայից արքա Յակոբեոսի դեպքում, մեր առջեւ Պարսից կրակապաշտ թագավորն է, բայց արդող՞ք III դ. Սագսին՝ 230-ական թվերին, որակիցաստանում համարաբարձ կրակապաշտություն էր, եւ բազում ատրուշաններ կային: Հայտնի է, որ Կարտիր մոզպետը միայն Արտաշիր I-ի որդուն՝ Շապուհ I-ի օրոք՝ III դարի երկրորդ կեսին, վերականգնէ իրանում կրա-

կապաշտությունը եւ գրադաշտական ծիսակարգը:

Հակառակ Ազաթանգեղոսի եւ Խորենացու, որոնք Սասանի որդի Արտաշիրի հետ են կապում Պարթեւ Անակի դավադրությունը Հայոց Խոսրով Ա թագավորի դեմ, ռուս պատմաբան Ալեքսանդր Աննինսկին XIX դարի վերջին իր «Հայ հին պատմիչները որպէս պատմական աղբյուրներ» (*Александр Аннинский. Древние армянские историки, как исторические источники, Одесса, 1899, с. 50-51*) աշխատության մեջ միանգամայն համոզիչ ցույց է տվել, որ Սեբեոսը եռյակ ժամանակագրության մեջ (*Պատմության Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Եր., 1979, էջ 58*), մեզ անհայտ աղբյուրից օգտվելով, հավաստի ներկայացնում է, որ Պարսից Արտաշիր թագավորի սադրանքով վատանուն Պարթեւ Անակը Հայոց Խոսրով թագավորին (Արտաշատի հաջորդը մոտ 272 թ.) սպանել է Դիոկորդիանոս կայսեր չորրորդ տարում, իմա՝ 287

թվին: Այստեղ հիշված Պարսից Արտաշիր թագավորը, ըստ իս, Շապուհ I արքայից արքայի ավագ որդին է՝ Որմիզդ-Արտաշիրը, որը Հայաստանի Մեծ թագավոր, ավելի ճիշտ՝ Մեծ Հայքի թագավոր է հիշատակված Կարտիր մոգայետի՝ Զաաբաի Չարդուշտ ժայռին 283 թվականին փորագրված արձանագրության մեջ (*Ալբերտ Մուշեղյան. Մովսես Խորենացու դարը, Եր., 2007, էջ 275 ծան. 2*): Իրականում այդ ժամանակ Պարսից թագավորն էր Կահան II-ը:

Անսինսկի Սեբեոսի Պատմության շնորհիվ բացահայտում է մի արժեքավոր փաստ, ըստ որի՝ Բագավանում հուրև անշեշ պահելու հրամանը, որը պրոֆ. Ռասսելի համար հիմք է ծառայել հայ ժողովրդիկն կրակապաշտ հռչակելու, տեղի է ունեցել Յայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունելուց ընդամենը մեկ տասնամյակ առաջ, այսինքն՝ Յայոց դարձի նախօրեին։ Իսկ թե ինչպե՞ս կարելի է մի հատիկ «անշեշ կրակով» ամբողջ ժողովրդին կրակապաշտ հռչակել, այդ հարցի վրա պետք է խորհի քննարկվող գրքի հեղինակը։ Մանավանդ որ մի այլ տեղ Ռասսելը նույնպես ընդունում է, որ Որմիզդ-Արտաշիրն է եղել Բագավանի հուրը «անշեշ պահելու» հրամանն տվողը (James R. Russell, P. 165):

Շարունակությունը՝ էջ 6

6.

Սկզբը՝ թիվ 12-16

Չարենցագետները նկատել են, որ երկրորդ հրատարակությունն իրականացնելիս հեղինակն ավելացրել է ցրիվ շարվածքով արտահայտությունների եւ ընդգծված բառերի ու բառակապակցությունների թիվը: Սա էլ մշակելիս նախորդի համեմատ արել է փոփոխություն, վերաբերմունք արտահայտելու մի ձեւ, որով ինքնակերպավորված հեղինակը լրացուցիչ ուշադրություն է հրավիրում իր կամ հերոսների խոսքի վրա, որոնց մեջ մատնանշված բառերն ու կապակցություններն ունեն տրամաբանական առանձնացում, յուրահատուկ մտքի շեշտի արժեք, հեղինակի թելադրանքով ընկալելու ուղղորդում: Գուցե Չարենցը բուլշեիկների արածները ուռուցիկ, այսինքն՝ տեսանելի ու շոշափելի դարձնելը մշակման այս եղանակով՝ ընդգծումով կամ ցրիվ տառերով գայունացնելով արդեն համարել է բավարար:

Այդպես ընդգծված է նաեւ սույն ազգային դավաճանությունը, որ իրագործել էին վեպի բուլշեիկ հերոսներ Կարո Դարայանը, պ. Մարուքեն, ծամը կտրած, այսինքն՝ հերասուն, օրիորդ Սաթոն (որի օրիորդ լինելուն խիստ կասկածում էր գոնե Ընկեր Վառդգեսը), որսորդական ապրանքների խանութի տեր, իշխանատեղեւ Նշան Մառնակյոզյանը, որ խայտառակվելով՝ Մագուլթի Զամոյի ահից փախել էր Բուլղարիա եւ այնտեղից վերադարձել իր պես մի քանի զինված փափախավորների հետ, եւ սրանց նմանակները, որոնք գործել էին հատկապես այն ժամանակ, երբ Մագուլթի Զամոն բացակայել էր Կարսից՝ «գրավալ տարածքներ» մեկնելու եւ այնտեղ թշնամուն դիմադրություն կազմակերպելու առաքելությամբ: Բայց երկու «հաստագլուխ էշերը»՝ Կարո Դարայանն ու պ. Մարուքեն՝ այդ նախորդյան ապիկար վարժապետը,

ԻՆՔՆԱԿԵՐՊԱՎՈՐՎԱԾ ՉԱՐԵՆՑԸ «ԵՐԿԻՐ ՆԱԽԻՐԻ» ՎԵՊՈՒՄ ԵՎ ԿԱՐՍԻ ԱՆԿՈՒՄԸ ՆՐԱ ՆԱՅԱՑՔՈՎ Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին



շուրջ 20 տարվա գաղտնի մտերմություն ունեին, այսինքն՝ հին փչացածներ էին՝ ունենալով բուլշեիկյան մութ անցյալ:

Մակդրային բնորոշումներն ասում են, որ նրանց հանդեպ հեղինակային ժխտական վերաբերմունքն ակնհայտ է: Կարո Դարայանը, նախքան Կարս վերադառնալը, «Էն գլխից» փչացել էր մոսկվաներում. ստանալով հատուկ դաստիարակություն՝ նա գործուղվել էր նախ Բաքու: «Լույս» նավթարդյունաբերական ընկերության կենտրոնական վարչության՝ Բաքվի գրասենյակի հաշվապահ Գերասիմ Աստոնիչը նամակով տեղեկացրել էր եղբորը՝ Արամ Աստոնիչին, իրենց «եզանի»՝ մորեղբորորդու մասին. «Նա, քամի կուլ տվող այդ հաստագլուխ էշը -երեւակայո՞ւմ եք - թուրք բանվորներին է գրռելիս եղել նավթարդյունաբերական նախորդայն այդ ընկերության դեմ.- ահա թե ինչո՞վ է զբաղվելիս եղել այդ «անբան անասունը» մինչեւ այս քաղաքը գալը,

սիրելի ընթերցող» (5, 149, բոլոր ընդգծ.՝ բնագրում): Իսկ այն ժամանակներում Հայաստանի վերաբերյալ բոլոր կարեւոր որոշումները կայացվում էին Բաքվում: Ահա նա Բաքվից գործուղվել էր Կարս՝ բնակչության մեջ խուճապ առաջացնելու եւ Հավիտենական Հիվանդի դեմ կռվող հայոց բանակում դասալրություն կազմակերպելու նպատակով: Իր «հոգեժառանգի» եւ սանիկի մասին այս տեղեկությունները ջանում էր թաքցնել Արամ Աստոնիչը, սակայն նամակն ստանալուց երկու օր հետո դարձի տեսչի գրասենյակում անսպասելիորեն հայտնվում է Մագուլթի Զամոն եւ կշտամբալից հեղնում է նրան. «Բավականին հետաքրքիր նորություններ ենք լսում «եզան»-ից մասին, Արամ Աստոնիչ» (5, 150, ընդգծ.՝ բնագրում): Ճիշտ է, սրանից Արամ Աստոնիչի դեմքը «գաջած պատի նման սպիտակեց», նա վերջին նամակով կշտամբեց, անարգանքի սյունին գամեց իր «անարժան» սանիկին,

բայց վերջինս անամոթաբար հայտնվեց հայրենի Կարս քաղաքում, գործեց Մոսկվայից ու Բաքվից ստացած իրահանգներով, դարձավ իր ծննդավայրի կործանման պատճառներից մեկը եւ մի գիշեր էլ սպանվեց «անհայտ չարագործների ձեռքով»:

Պ. Մարուքեն, ով ներկայանում էր որպես Բեռլինում կրթված վարժապետ, թեեւ իրականում ընդամենը տեղական յոթնամյա կրթություն էր ստացել եւ ինչ-որ «հրաշքով», այսինքն՝ կասկածելի մութ գործերով եղել էր Բեռլինում եւ գործել Մոսկվա-Բաքու-Կարս ուղեգծով՝ համապատասխան կենտրոնից ստանալով կուսակցական հանձնարարականներ:

Պատահական չէ, որ Արամ Աստոնիչի քրոջ հարազատ որդի Կարո Դարայանը, ում ոչ պատահականորեն նաեւ Փարայան էին կոչում, 20 տարի հետո ճշգրիտ հիշել էր պ. Մարուքեի հասցեն եւ իջեւանել հենց նրա տանը:

Ծխականի ուսուցիչ ռուսախոս օրիորդ Սաթոն, որ «Վազգալի մեյդանի» բաշիբոզուկներին, երկաթուղային բանվորներին հակառակ հեղափոխական գաղտնի դասեր էր տալիս, մի տեղական նշանակության Կլարա Ցետկին է, Ռոզա Լյուքսեմբուրգ կամ Զալանթայ կամ էլ մի հայ կոմունիստ ակադեմիկոսի կողմից «հայ ժողովրդի պանծալի դուստր» հորջոջված Ոսկեհատ Տեր-Հովհաննիսյան, որ Շվեյցարիայում խայտառակ կապեր է ունեցել Էմիլգրանտ ռուս հեղափոխականների հետ եւ դարձել իր ամուսնու՝ մեծատաղանդ գրող Մուրացանի խելագարու-

թյան ու մահվան պատճառը: Անգամ Վ. Ի. Լենինն էր նրան նամակներ գրել՝ «թանկագին Ոսկի» դիմումնաձեռով... (տե՛ս, օրինակ, Վ. Ի. Լենինի երկերի 54-րդ հատորում 6-րդ եւ 9-րդ նամակները): Նրանք բոլորն էլ կատարում էին ինչ-որ կուսակցական կենտրոնի կամ իրենց գլխավոր ղեկավարի իրահանգները: Չարենցը գիտեր դրանց բոլորին ու մանավանդ նրանց ղեկավարների էությունը: «Եվ ովքե՞ր էին դրանք, ո՞վ էր դրանց ղեկավարը... կամ ինչպես Հաջին էր ասում - «վերի գլուխը». - արյունարբու մի սկյուռ, ռսացած մի մոնղոլ, մի գերմանական լրտես, որ այլուբաժ վազնուվ հայրենիք վերադարձած՝ չին զորքերու եւ անվարտիք ավարաներու օգնությամբ ներսերում խլել էր արդեն իշխանությունը եւ հանձնել էր գերմանացիներին՝ այսպիսով գլուխ բերելով այն խոստումը, որ սկզբից էր արյունարբու Վիլհելմ կայսեր ... Ահա՛ թե ո՞վքեր էին դրանք, եւ ահա՛ թե ո՞վ էր դրանց «ամենավերի գլուխը», այսինքն՝ «ամենամեծ ղեկավարը» (5, 233-234. բոլոր ընդգծ.՝ բնագրում): Մեքերվածից երեւում է, որ ինքնակերպավորված հեղինակը ոչ միայն չի հերքում Հաջի Մանուկ Օսիկ Էֆենդու եւ ուրշների կողմից Լենինի մասին շրջանառվող լուրը, այլ ահա թե վերաբերականով վճռաբար հաստատում է, որ այդ ամենավերի գլխի կամ գլխավոր ղեկավարի հանձնարարականներն ու իրահանգներն էին կատարում վեպում կերպավորված նախադրված հերոսները:

Շարունակությունը՝ էջ 8

Սկզբը՝ էջ 5

Արտավան թագավորի սպանության համար հոսքով Մեծի վրեժխնդրությունը եւ Պարսից կողմերը՝ մինչեւ Ասորեստան եւ Տիգրանի դռները կատարած արշավանքը ճշգրիտ արտացոլվել են Ագաթանգեղոսի Պատմության մեջ. «Արդ՝ ի միս եւս ի գլուխ տարւոյն սկսաներ հոսքով թագաւորն Հայոց գունդ կազմել եւ զօր բովանդակել, գումարել զգօրս Աղուանից եւ Վրաց, եւ բանալ զդրունս Ալանաց եւ զճորայ պահակին, հանել զգօրս Հոնաց, ասպատակ դնել ի կողմանս Պարսից, արշավել ի կողմանս Ասորեստանի, մինչեւ ի դրունս Տիգրանի .../ Վաղվաղակի ի թիկունս հասանելին մեծաւ բազմութեամբ ժիր եւ քաջ առն եւ ծիող եւ բուռն կազմութեամբ Աղուանք, Լիւիք եւ Ծիղաք, Կասպք եւ այլ եւս որ ի սմին կողմանց, զի վրեժ արեանն Արտաւանայ խնդրեսցեն» (Ագաթ., պարգ. 19):

Սակայն Աննիսկին կարծում է, թե հոսքով Մեծի այս արշավանքը դեպի Ասորեստան եւ Տիգրանի պաշարումը իրականում նրան չեն պատկանում: Այս դեպքերից ավելի քան 20 տարի առաջ՝ 260 թվականին, հռոմեացի կայսր Վալերիանը Եդեսիայի մոտ պարտվեց եւ գերի ընկավ Շապուհ Ա-ի ձեռքը (Հ. Մանանդյան. Ըննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հտ. Բ, մասն Ա, եր., 1957, էջ 93): Իրենց

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՔՐԻՍՏՈՆԵՌՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՄԻՆ Ձեյմն Ռասսելը հայ ժողովրդի կրակադաճության մասին

դժբախտ կայսեր վրեժն առնելու համար հռոմեացիներն ամեն կերպ խրախուսեցին Պալմիրայի խիզախ թագավոր Օդենատին՝ դիմելու հանդուգն գործողությունների: Օդենատը մաքրեց պարսիկներից Փոքր Ասիան եւ Ասորիքը, անցավ Եփրատ գետը, ազատագրեց Մծիքը եւ Խառանը, հասավ Տիգրան, պաշարեց այն եւ հաջողությամբ ճակատամարտ մղեց նրա պատերի տակ: Աննիսկին թյուրիմացաբար կարծում է, թե Օդենատի բոլոր այս սխրանքներն են, որ վերագրվել են քրիստոնյա Տրդատ III-ի հայր Խոսրով Մեծ թագավորին (Ա. Աննիսկի. Ս. 53), որը, իբր ոչ մի գործով աչքի չի ընկել. - «այնպես, որ միանգամայն հնարավոր է, որ այստեղ հայերն ակամայից յուրացրել են օտար հերոսին՝ իրենցը չունենալու պատճառով» (Ա. Աննիսկի. Ս. 53): Աննիսկու այս կարծիքին նպաստել է եւ այն, որ պարսից դեմ մղած ճակատամարտերի եւ մինչեւ Տիգրանի դռները կատարած ռազմական արշավանքի համար Օդե-



նատն արժանացավ Խոսրով Մեծի ճակատագրին: Պարսից արքունիքն ավելի վաղ դավադիր սպանությամբ վրեժխնդիր եղավ նաեւ Պալմիրայի թագավոր Օդենատից, որը 266-267 թվին որդու հետ սպանվեց իր զարմիկի ձեռքով (Ա. Աննիսկի. Ս. 53-54):

Ռուս պատմաբանը, տուրք տալով իր երեւակայությանը, կարծում է. «Հայ պատմիչները

ստույգ չեն վկայում եւ չէին էլ կարող վկայել իրենց Մեծ Խոսրովի ոչ մի կարեւոր գործ, բացի պարսիկների դեմ նրա տարած հաղթանակներից... Բայց ե՞րբ կարող էին լինել փոքրիկ Հայաստանի արքայի այդ աներեւակայելի հաղթանակները արեւելյան հզորագույն միապետության նկատմամբ: Այդ հաղթանակների համար բոլորովին ժամանակ չի

մնում III դարում, ինչպես մենք տեսանք արեւմտյան գրողների վկայություններից՝ չխոսելով ընդհանրապես պարսիկների դեմ հայերի տարած հնարավոր հաղթանակների անհնարինության մասին» (Ա. Աննիսկի. Ս. 52): Այս տողերը շարադրելիս Ա. Աննիսկին պետք է մտաբերեր, որ Օսմանյան կայսրության դեմ տարած 150 տարվա հաղթանակների համար Ռուսական կայսրությունը պարտական է բոլոր այն գորավարներին՝ սկսած Ա. Սուվորովից, որոնց երակներում հայկական արյուն էր հոսում:

Տրդատի հայր Խոսրով Մեծին «դժգույն կերպար» անվանելով հանդերձ՝ Աննիսկին, ինքն իրեն հակասելով, միանգամայն իրական է համարում այն, որ Հռոմի Կարոս կայսեր արշավանքի ժամանակ «այս Խոսրովն իսկապես մարտնչել է պարսիկների դեմ եւ ամայացրել Ասորեստանը» (Ա. Աննիսկի. Ս. 53): Դա տեղի ունեցավ 282-283 թվերին, եւ այդ արշավանքին («ի կողմանս Ասորեստանի, մինչեւ ի դրունս Տիգրանի» Ագաթ., պարգ. 19) մասնակցում էր նաեւ Հռոմի Կարոս կայսրը, որը 283 թվին Տիգրիսի ափերի մոտ հանկարծամահ եղավ (Հ. Մանանդյան. Ըննական տեսություն հայ ժողովրդի պատմության. էջ 101):

Շարունակելի
Վերտ ՄՈՐԵՆՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

Սկիզբը՝ թիվ 10-15

Մեկ այլ կարծիքի համաձայն՝ «հիվանդին այդ վիճակում պահպանելը մեծ ծախսեր է պահանջում, իսկ նրա հարազատներն ու մերձավորները տառապում են, գտնվում հոգեկան ծանր ապրումների մեջ»:

Հետաքրքիր է, որ Էվթանազիայի կողմնակիցների թիվը մեծանում է, երբ հիմնախնդիրն անձնավորում ենք՝ դրան հաղորդելով մտերմիկ, խիստ ներանձնական իմաստ: Այսպես օրինակ. «Արդյո՞ք կցանկանայիք արագ մեռնել, եթե հայտնվեիք անհուսալի, գերծանր վիճակում» հարցին տրված պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ. հարցվածների 56 տոկոսը համաձայն է, որ իր տառապանքները դադարեցվեն բժշկի կողմից, 9 տոկոսը հրաժարվել է հարցին պատասխանելուց, 20 տոկոսը հայտարարել է, որ Էվթանազիային դեմ է, եւ որ իրենք կկառնեն կյանքին մինչեւ վերջ: Իսկ 15 տոկոսն ասել է, որ «անկարող է պատասխանել տրված հարցին»:

Սնացած բոլոր հարցվածները միամտաբար համոզված են, որ իրենք երբեք չեն հայտնվի նման դաժան ընտրության առաջ...

Հարցվածների զգալի մասը բանավոր (վերբալ) մակարդակում դեմ է Էվթանազիային, սակայն դրա հնարավորությունը չի բացառում, երբ խոսքը վերաբերում է կոնկրետ ծայրահեղ իրավիճակներին:

Պարզվել է նաեւ, որ բանավոր արտահայտված կարծիքի եւ իրական կարծիքի միջեւ կան որոշակի տարբերություններ՝ կախված հասարակական կարծիքից, կրոնական (քրիստոնեական) ավանդույթներից եւ այլ բաներից:

Հասկանալի է, որ հասարակական կարծիքն ամենեւին չի խրախուսում Էվթանազիան, ավելին՝ ինչ-որ իմաստով այն դատապարտում է:

Լինում են բազմաթիվ դեպքեր, երբ մարդիկ, տեսնելով իրենց մերձավորների ահավոր տառապանքները, մտովի ցանկանում են նրանց մահը՝ «Երանի շուտ մեռնել, փրկվել անասելի ցավե-

Էվթանազիայի ֆենոմենը եւ նրա փիլիսոփայական մեկնաբանության առանձնահատկությունները



րից, միեւնույն է՝ օգնել, բուժել ոչ մի կերպ չենք կարողանում»:

Սակայն մտովի արտահայտված ներքին ցանկությունը մեծամասամբ երբեք չի վերածվում գործնական քայլի, քանի որ ներհինջում է. «Ի՞նչ կասեն մարդիկ»:

Այս հանգամանքն անհրաժեշտ է հաշվի առնել, որպեսզի պարզել Էվթանազիայի նկատմամբ իսկական վերաբերմունքը, նրա օրինականացման խորին հոգեբանական շերտերը, ներքին արգելքները: Այստեղ դրսևորվում է ոչ միայն հասարակական կարծիքի ուժը, այլև, դիցուք, աստվածասիրական դիրքորոշումների կայունությունը: Հարցված բժիշկներից մենք հիշեցրեց այն պատգամները, որ Ամենաբարձրյալը շնորհեց Մովսեսին, երբ նա հրեաներին ազատեց եգիպտական գերությունից: Առաջին պատգամն էր՝ «Մի՛ սպանիր»:

Նկատենք, որ Աստվածաշնչում չկա որեւէ հակադարձում այդ պատգամին, որեւէ տարընթերցում՝ ազատ մեկնաբանության

ծեուով: Պատգամը հնչում է կարճ ու ազդու, թույլ չի տալիս որեւէ երկիմաստություն: Աստված մեզ կյանք է շնորհել եւ Աստված էլ ի գորու է որոշելու, թե երբ ենք լքելու երկրային կյանքը:

Հարցվածների 57 տոկոսը համարում է, որ «Մարմնական, ֆիզիկական տառապանքները դեռեւս ամենածանր տառապանքները չեն, որին դատապարտված է մարդ արարածը: Մարմինը, ինչպես ողջ ցավը մահվանից հետո, հող կդառնա, իսկ մարդու հոգին կհամբարձվի երկինք»:

Քրիստոնեական եկեղեցին վճռականորեն դատապարտում է Էվթանազիան: Դավանաբանության կոնգրեգացիայի 1980 թ. հռչակագիրը միանշանակ հայտարարում է. «Անհրաժեշտ է ողջ հաստատակամությամբ ասել, որ ոչ ոք չի կարող թույլ տալ անմեղ մարդու սպանություն՝ լինի այն սաղմ կամ պտուղ, երեխա կամ հասուն, անբուժելի կամ մեռնող մարդ: Բացի այդ, ոչ ոք չի կարող պահանջել կատարել այդպիսի

սպանություն՝ թե՛ իր եւ թե՛ որեւէ մեկ ուրիշի նկատմամբ...»: Այսպիսով՝ դատապարտման ենթակա է կյանքի իրավունքի ցանկացած ոտնահարում:

Ժողովրդավարացման ներկայիս անսովոր, երբեմն ոչ հարթ ուղով զարգացող գործընթացները չեն շրջանցել նաեւ կյանքի ու մահվան կենսահույզ հարցերը: Հարցվածների ճնշող մեծամասնությունը իրավացիորեն համոզված է, որ յուրաքանչյուր մարդ իր կարծիքը, տեսակետն ունենալու իրավունք ունի, այդ թվում՝ Էվթանազիայի վերաբերյալ:

Ընդ որում՝ ամեն մարդ ելնում է իր աշխարհգագաղությունից եւ մարդու էության սեփական ըմբռնումից: Հարցված ուսանողների 56 տոկոսն արտահայտում է հետևյալ միտքը. «Անհրաժեշտ է մարդուն ընձեռել մահվան կամ կյանքի ընտրության իրավունք՝ առանձնապես այն պահին, երբ նրա հետագա գոյությունը միայն անասելի տառապանք է նրան պատճառում...»:

Միգուցե չպետք է միանշանակ դատապարտել մահվան ու կյանքի սահմանամերձում գտնվող մարդուն, ով հարկադրված է դժվար ընտրություն կատարել հոգուտ «թեթեւ» եւ գուցե արժանապատիվ մահվան»:

Էվթանազիային խոսքով հակառակվողներից շատ-շատերը, անձամբ հայտնվելով անհուսալի վիճակում, կնախընտրեին անասելի տառապանքներից ազատվելու ուղին: Իսկ եթե խոսքը վերաբերում է հարազատին, ապա չի գնա այդ քայլին՝ վախենալով նաեւ հասարակական կարծիքից: Այսինքն՝ սոցիոլոգիական հարցման եւ մարդկանց հոգեբանության ուսումնասիրման արդյունքում մենք եկանք այն եզրակացության, որ գոյություն ունի խզում «ընդհանուր առմամբ դեմ եմ Էվթանազիային» եւ «կոնկրետ

իրավիճակներում կարող է դեմ չլինեմ» պատասխանների միջեւ:

Պետք է տրվի իրավիճակային որոշակի վերլուծություն՝ կախված տվյալ հիվանդի սոցիալ-դեմոգրաֆական, հոգեկան եւ այլ առանձնահատկություններից: Բոլոր պայմանների համար պատրաստի դեղատոմս, համընդհանուր միանշանակ լուծումներ չկան: Եվ հնարավոր էլ չէ առաջարկել:

Պետք է հաշվի առնել, որ կան իրավիճակային լուծումներ, քանի որ սա բարդ խնդիր է, եւ կան տարբեր հակադիր, իրարամերժ պատասխաններ, որոնք բոլորն էլ կարող են հավասարաթեք լինել:

Փիլիսոփայության պատմության մեջ՝ մասնավորապես Կանտի անտիկնոմիաներում, կարդում ենք. «Աստված կա՞, թե՞ չկա, աշխարհն ունի՞ սկիզբ, թե՞ ոչ»: Փորձելով պատասխանել այդ հարցերին՝ մարդկային միտքն ընկնում է հակասությունների մեջ, որովհետեւ կողմ եւ դեմ փաստարկները հավասարազոր են:

Սակայն, չնայած դրան, Կանտը պնդում է. «Աստծո գոյությունն ընդունելը եւ Նրան հավատալը յուրաքանչյուր բանական մարդու բարոյական պարտքն է»: Եվ այսպես՝ հարցին լուծում տալու համար պետք է հաշվի առնել՝

- ա. կոնկրետ իրավիճակը,
- բ. հիվանդի անհատական առանձնահատկությունները,
- գ. հոգեկերտվածքը,
- դ. մշակութային ավանդույթները, սովորույթները,
- ե. ժամանակի առանձնահատկությունները,
- զ. տարիքային առանձնահատկությունները եւ այլն: Սակայն, այդուհանդերձ, որպես քրիստոնյա ժողովուրդ, մենք ասում ենք ո՛չ Էվթանազիային:

Շարունակությունը՝ էջ 8

Սկիզբը՝ էջ 5

«- Սա պոեմ է, լիրիկական պոեմ եւ կոչվում է «De profundis»:

Պոեմն սկսվում էր բանտից: Պոետը բանտախցում է, նայում է նրան հին բարեկամ լուսինը եւ ապա լեզու առած սկսում խոսել նրա անցած կյանքի ուղիների, որոնումների եւ մոլորությունների մասին: <...>: Պոեմում կային հատվածներ՝ ուղղված պոետի հակառակորդների դեմ» (*Հուլեթեր եղիշե Զարենցի մասին, 1985, էջ 103*): Հուլազգիրը ճշտում է պոեմի գրության թվականը՝ 1927 եւ ավելացնում, որ հետագայում նա այրեց այդ պոեմը եւ մյուս բանաստեղծությունները:

Սա ճիշտ վկայություն է, որովհետեւ «Այրած երգեր» բանաստեղծության մեջ (1929) իր հուսահատ սգերգերը ոչնչացնելու մասին խոսում է նաեւ Զարենցը:

Իր նորահայտ ընդարձակ հուշերում Խորեն Աճեմյանն ավելի հիմնավոր է անդրադառնում Զարենցի այդ ստեղծագործությանը եւ անում բազմաթիվ մեջբերումներ (գրված է ռուսերեն, թարգմանաբար Նախապատրաստում ենք տպագրության):

Ըստ Խ. Աճեմյանի՝ «Հատուցում» վերնագրված պոեմից բա-

Ե. ԶԱՐԵՆՑԻ ՋԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ «ԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նվիրվում է Ե. Զարենցի ծննդյան 120-ամյակին



Ըստ այս հուշերի՝ 1924-ի հոկտեմբերին, Խ. Աճեմյանի ձեռամբ, Զարենցը նամակներ է ուղարկել Մոսկվայում գտնվող կնոջն ու Կ. Հալաբյանին: 1926-ին թարգմանել եւ կնոջ անունով տպագրել է Ս. Եսենինի «Թղթի իմ» բանաստեղծությունը, 1933-1934-ին շարադրել է հրապարակախոսական տրակտատ՝ ազ-

գային հարցի մասին:

Զարենցի խոսքերից նա լրացրել է «Լիրիկական անտրակտ» շարքի XVI բանաստեղծության («Քայլի՛ր, քայլի՛ր քո ճանապարհով») բազմակերտված վերջին տողը՝ «Երկրիդ պես որբ ու վարանոտ...»:

Սակայն «De profundis»-ի գաղափարը հետագայում եւս՝ մին-

չեւ կյանքի վերջը, հետապնդել է բանաստեղծին: Նախ, 1937-ին նա արել է «De profundis» վերնագրով գրառում: Եվ ապա՝ նրան պաշարած ծանր զգացողությունները վերամարմնավորվեցին մի անավարտ երկում, որը հայտնի է «Պոեմ անվերնագիր», «Պոեմ անանուն» խորագրերով եւ ունի «Երազների մասին», նաեւ «Ուլալյում» բաժինները: Այս պոեմի բանալին, ըստ նրա ծանուցման, տալիս է Էդգար Պոն եւ Չիգմունդ Ֆրոյդը: Ընդ որում՝ թե՛ այս պոեմը եւ թե՛ «De profundis» գրառումը ժամանակային առումով գրեթե համընկնում են: Առաջինը թվագրված է՝ «2 ապրիլ, 1937», երկրորդը՝ «13 ապրիլ, 1937»: Այս երկուսն էլ, ըստ էության, մի ընդհանուր մտահղացման մասեր են:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

Սկզբը՝ էջ 6

Խորհրդային չարենցագիտությունը հասկանալի պատճառով չըջանցել կամ խուսափել է չարենցյան այս տողերը մեկնաբանելուց, եւ որքան մեզ հայտնի է, դարձյալ պրոֆ. Ժ. Զալանթարյանն է այն հանգամանորեն մեկնաբանել իր մեկ ուրիշ՝ «Եղեռնապատում ըստ Եղիշե Զարենցի» ուսումնասիրության մեջ (տե՛ս Ժ. Զալանթարյան, *Նշված գիրքը*, էջ 207):

Մինչեւ կյանքի վերջն էլ Կարսի եւ պատմական հայրենիքի կորստյան ցավն ուղեկցել է Ե. Չարենցին: Վկա՝ 1936 թ. աշնանը գրած «Միշտ երբ կարդում եմ Տեղյանը, Կարսն է հիշում իմ հոգին» արտահայտությունը: «Էպիկական լուսաբաց» ժողովածուի «Լիրիկական անտրակտ» բաժնի 1928 թ. գրած «Ars Poetica» շարքի առաջին բանաստեղծության տողերում, թվում է, Չարենցը Մարքսի եւ Լենինի գովքն է անում՝ նրանց համեմատելով Շեքսպիրի ու Դանտեի նման վեհությունների հետ, սակայն ուշադիր ընթերցումով հասկանալի է կոռնա «Ես ասանկ կ'ըսեմ, դուն անանկ հասկցիր» հեգնական այլասացությունը: Միմյանց գրեթե չառնչվող այդ չորս անունների համաժամանակյա վկայակոչումը պարզապես բուն ասելիքը մշուշով քողարկելու եւ չցայտունացնելու, տողերի խորքում որպես գաղտնագիր պահելու միտումն ունի:

Ողջո՛ւյն ձեզ, ողջո՛ւյն, Լենի՛ն, Մա՛րքս, Ու գո՛րծ, ու փորձություն՛ն, ու

երգեր նո՛ր,-

Էլ չես վերադառնա երբեք դու Կարս՝
Տեղյանի, Մահարու կամ քո երգի

հունով:

Ողջո՛ւյն ձեզ, ողջո՛ւյն, Լենի՛ն, Մա՛րքս, Ու Շեքսպի՛ր, ու Դա՛նտ, ու վեհություն: - Օ՛, ժամեր, հոսեցեք դուք հիմա պարզ Ու բախե՛ք, ու բախե՛ք բյուրավոր դուռ: 4, 137

Ընդգծված «Էլ չես վերադառնա երբեք դու Կարս» տողը հենց այդ մոնչացող ցավի գաղտնագիր արտայտությունն է, որ թաքցրել է Չարենցը բանաստեղծության խորապատկերում:

7.

Ինքնակերպավորված հեղինակը, իր մարդկային էությանմբ, Կարսն առանց կրակոցի հանձնման ու այդպիսով Երկիր Նաիրիի կործանման հանդեպ խոհական ու զգացմունքային վերաբերմունքով առավել տեսանելի եւ ցայտուն երեւում է վեպի երրորդ՝ վերջին մասում: Նաիրյան այդ քաղաքում ու ողջ երկրում գլխապտույտ արագությամբ տեղի են ունեցել մութ, «գաղտնիքի եւ խորհրդավորության քողով ծածկված» ցավալի դեպքեր, եւ «հագիվ թե երբեւե որեւե մեկին հաջողվի վեր հանել այդ քողը եւ նայել կատարված դեպքերի իսկական աստառին»: Բայց

ԻՆՔՆԱԿԵՐՊԱՎՈՐՎԱԾ ՉԱՐԵՆՑԸ «ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ՎԵՊՈՒՄ ԵՎ ԿԱՐՍԻ ԱՆԿՈՒՄԸ ՆՐԱ ՆԱՅԱՅՔՈՎ Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին



ինքնակերպավորված հեղինակը մնում է պատմական հավաստիության ու գեղարվեստական ճշմարտության սահմաններում եւ չի ապավինում երեւակայությանն ու հորինած ենթադրությանը: Կարսի անկման ողբերգական վերջին դրվագները պատկերելիս եւ հերոսներին կերպավորելիս բնութագրվել է նաեւ Չարենցն ինքը: «Այնպես որ այստեղ մենք պիտի խուսափենք զանազան ենթադրություններ անելուց եւ եզրակացություններ հանելուց. պիտի պատմենք լոկ այն, ինչ մեզ հաջողվել է տեսնել սեփական աչքերով կամ լսել մարդկանցից, որոնք մեր աչքին ունեն ճշմարտախոսի անաչառ կերպարանք» (5, 208 - 209, ընդգծ. մերն են - Ս. Մ.): Մեջբերվածից դարձյալ երեւում է Կարսի անկման մասին բուն ճշմարտությունը բացահայտելու հեղինակի բուռն ու անսքող ձգտումը: Բոլորն էին տեսնում չարիքի արմատը, հեղինակային խոսքում էլ այն բազմիցս մատնացույց է արվում՝ որպես «վարակող մի սպի», դեմքի վրա ցցված քիթ, որը պետք էր պոկել ու դնել նետել, սակայն հեղինակային խոսքով չբավարարվելով՝ նա սա էլ է վերագրել իր համակրելի ու միեւնույն ժամանակ հեգնելի հերոսին՝ «հանճարեղագույն Մագուլի Զամոյին», որովհետեւ համազգային աղետի բուն պատճառները տեսնողներից միայն նա՝ էր «մատուցել դրե՛ր բուն վերջի վրա»: Զեղինակն իր ասելիքը հաստատել է հերոսի՝ ռազմաճակատից գրած հանձնարարական նամակի հրամանով: Ի դեպ, այստեղ էլ դաշնակցական Զամո Զամբարձումովիչը բացերիբաց արտահայտել է իր ժխտական վերաբեր-

մունքը բուլշեիկների եւ հատկապես Կարո Դարայանի արարքների նկատմամբ. «- Դեգերտիրության արմատը հարկավոր է տեսնել այն նաիրադավաճան սրիկաների մեջ, որոնց առաջնորդն էր մեր քաղաքում անհայտ չարագործների (հարկավոր է ասել բարեգործների, փակագծում ավելացրել էր Մագուլի Զամոն) ձեռով շահատակ եղած Կարո Դարայանը...: - Դրանք լցվել են հիմա ռազմաճակատը եւ դեգերտիրություն են քարոզում մեր արի զինվորներին, դրանք զինվորներին խոստանում են հող, խաղաղություն ու հանգստություն եւ նման կտի միջոցներով քայքայում են մեր բանակը...: - Դրանք վերաբերմամբ հարկավոր է ամենախիստ միջոցների դիմել, չքաշվել անգամ գնդակահարությունից» - հրահանգել էր վերջում եւ հրահանգի վերջին տողերը երեք անգամ ընդգծել Մագուլի Զամոն» (5, 251, բոլոր ընդգծ.՝ բնագրում):

Բայց արդեն ուշ էր. անգամ կախաղանի ու գնդակահարության սպանալիքով անհնար էր դասալքության առաջն առնել: Ու երբ մեկ ամիս հետո վերադարձավ «արքայակերպ» Մագուլի Զամոն գրավյալ վայրերից, Կարսի բոլոր մասերը քանդված էին՝ կարերը հանված հագուստների նման, ու քաղաքը դարձել էր անկառավարելի: Այս իրադարձությունը եւս հեղինակը մեկնաբանել է սեփական ըմբռնումով ու վերաբերմունքով: Նա ընդգծել է քաղաքի եւ Նաիրապետության կործանման երկու հիմնական պատճառ. առաջին՝ Մագուլի Զամոն թեկուզ մեկ օրով չպիտի հեռանար Կարս քաղաքից, ո-

րովհետեւ նա՝ էր քաղաքում կյանքի շարժումը կազմակերպող գլխավոր առանցքը, ինչպես Մեռելի Ենոքի ասած «Փայտոնի օսը», եւ երկրորդ՝ Մագուլի Զամոն թուլություն էր դրսեւորել դեգերտիր-դասալիքների հանդեպ՝ ժամանակին նրանց խստագույնս չպատժելով: Այնուամենայնիվ, հեղինակը համակրում է իր հերոսին՝ նրան բնորոշելով **հանճարեղագույն եւ արքայակերպ** մակդիրներով՝ ամենեւին էլ հեգնական իմաստ չդնելով այդ բնորոշումների մեջ: Ընդհակառակը՝ Ե. Չարենցին հաջողվել է կարեկցանք ու համակրանք առաջացնել ընթերցողի մեջ դեպի նաիրյան այդ վերջին դժբախտ «արքան», որն այլեւս անգոր էր կասեցնել հազարագլուխ նախիրի պես, անգամ կանացի շրջագգեստներով խուճապահար փախչող «պատկառելի նաիրցիներին»՝ մանավանդ Կարսի կայարանից հեռացող վերջին գնացքի տեսարանում: Նա գործադրում է բոլոր ջանքերը, կառնում թշնամուն հետ շարունակում եւ քաղաքը փրկելու վերջին հույսերին՝ «թոփ քցել» չիմացող տրեխավոր անփորձ, բայց հայրենասեր զինվորներին, որովհետեւ սպայակազմը գիշերով գաղտնի լքել էր բերդն ու քաղաքը: Մինչեւ վերջ էլ նա չի համակերպվում քաղաքը եւ երկիրը Զավիտենական Զիվանդ դարավոր ուսոխին հանձնելու գաղափարին: Մագուլի Զամոն, բժիշկ Սերգեյ Կասպարիչը, Ընկեր Վառդգեսյանը, այնուամենայնիվ, համակրելի հերոսներ են, ովքեր ճակատագրական պահերին ծավալում են ուշացած հայրենափրկիչ գործունեություն եւ, ի վերջո, չեն հեռանում կործանված քաղաքից ու Զիսուսի նման կախաղան են բարձրացվում ոսոխի ձեռքով՝ արժանապատվորեն ընդունելով մահը:

Ինքնակերպավորված հեղինակին տեսնում ենք ոչ միայն վեպի երեք մասերում, այլեւ նախաբանում ու վերջաբանում եւ «Երկրորդ կրտսերականության առթիվ» գրության մեջ, որտեղ ժողովրդական «Կուզիկի մեջքը գերեզմանը կշտկի» ասացվածքի իմաստությունը համարում է **թեական** եւ հակադրվում նրան. **«Գերեզմանից հետո** - էլ ի՞նչ **շտկում**: Զասկացողը կհասկանա»:

Այո՛, կիսակնան՝ վերստին ընթերցելով «Երկիր Նաիրի» պոեմանման վեպը եւ ուշադիր հետեւելով ինքնակերպավորված հեղինակին:

Սամվել ՄՈՐԱՎՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Էվթանազիայի ֆենոմենը եւ նրա փիլիսոփայական մեկնաբանության առանձնահատկությունները

Սկզբը՝ էջ 7

Ապագա բժիշկն ամեն ինչ պետք է անի՝ վերացնելու հիվանդության պատճառները, կարելին ու անկարելին պետք է անի այսօր անբուժելի համարվող հիվանդությունները բուժելի դարձնելու համար: Սա՝ է նրա առաքելությունը. բուժել, սփոփել, հույս ու կյանք տալ, ոչ թե «անբուժելի է» որակելով՝ հեշտ ճանապարհ ընտրել:

Հարցվածների 65 տոկոսի կարծիքով. «Եթե պետությունը կարողանա պատշաճ կյանք ապահովել մարդկանց համար, ապա էապես կնվազի ինքնասպանությունների թիվը՝ առավել եւս երիտասարդների շրջանում»:

Նաեւ պետք չէ մոռանալ բժշկական սխալի մասին: Բժիշկներ-



ըն մարդ են, մահկանացու, կարող են սխալվել:

Մեզանից շատերը կարող են իրենց անձնական կյանքից օրինակ բերել, երբ բժիշկներն առա-

ջարկել են հիվանդին դուրս գրել հիվանդանոցից, տանել տուն, քանի որ հիվանդը շատ անհույս վիճակում է. «Տարե՛ք, տարե՛ք տուն, թող տանը մահանա»: Եվ

այդ «անհույս» հիվանդը տանը ապրել է ... երկար տարիներ:

Անդրադառնալով Էվթանագիայի բարոյական կողմին՝ հարկ է շեշտել, որ պետք է գիտակցել խնդրի ողջ պատասխանատվությունը: Անկասկած, խիստ բարդ խնդիր է: Աստված տա, որ դրա լուծման գործում չդրսեւորենք ավելորդ գերջանադրություն, հանգուցային հարցերին հեշտահաճո, ոյրորին լուծումներ գտնելու անբարո վարքագիծ:

Եվ վերջապես պետք է ենթարկվել Զամաշխարհային բժշկական միության 3-րդ գլխավոր համաժողովի կողմից ընդունած բժշկական բարոյագիտության միջազգային վարքականոնին, որն այլ կարելու դրույթների հետ մեկտեղ ասում է.

«Բժիշկը պետք է մշտապես հիշի մարդկային կյանքի պահպանման իր պարտականության մասին: Բժիշկը պետք է դիմի առավել իրավասու գործընկերներին, եթե հիվանդին անհրաժեշտ բուժումը դուրս է սեփական մասնա-

գիտական հնարավորությունների շրջանակից»:

Սուսաննա ԴԱՎԹՅԱՆ

Փիլիսոփայական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Զիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Զրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 19.9.2017 թ..

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ